

2327

2328

2329

2330

2331

Տիկին հիւսօնին

վարդելով

84

Մ-89

Աղջկամնայրին

1328

27 K In hand P

2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ն. ՂԱԶԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԹԻՒ 7

ԿԻ ՏԸ ՄՈԲԱՍԱՆ

ՏԻԿԻՆ ՀԻՒՍՈՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ

ԶՈՐԱ ՖԱ.ՆԹԷԶԻ ՎԻՊԱԿՆԵՐ

Թրգմ. Յ. ԱՐՄԼԱՆԵԱՆ



ԳԻՆ՝ 2 ԵԳ. ԴՀ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԱՄ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Ա.ՂԱՅԻՔՍԱՆԴՐԻՆ.
1929

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ն. ՂԱԶԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԲԻՒ 7

34

Մ-89

ԿԻ ՏԸ ՄՈԲԱՍԱՆ

ՏԻԿԻՆ ՀԻՒՍՈՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ

- 1.— ՏԻԿԻՆ ՀԻՒՍՈՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ
2.— ԶՈԼՈՂԱՆՔ ՄԷ
3.— ՄՈԼԵԳՆԱՆՔ
4.— ԳԵՐԱՍԻ ԱՂՋԱԿԱՆ ՄԷ ԱՐԵԱՄՆԵՐԸ



աբ 109

2003

ՅՊԱԿՐՈՒԹԻՒՆ
ԱՐԱՄ ԱՏԵՓԱՆԵԱՆ
ԱՂՋԱԿԱՆԴՐԻԱՆ
1928

28208-4.2



ՏԻԿԻՆ ՀԻՒՍՈՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ

(Հեղ. ԿԻ ՏԸ ՄԹԲԱՍԱՆ)

I

ՏԻԿԻՆ ՀԻՒՍՈՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ

Ժիզօրէ անցած էինք, երբ արթնցած էի լսելով
քաղաքին անունը, զոր պաշտօնեաները կը պռապին, և
կրկնն քնանալու վրայ էի, երբ սոսկալի ցնցում մը զիս
նետեց դէմօ նստող խոչոր կնոջ մը վրայ։

Ճամբուն մէջտեղ կեցող մեքենացին մէկ անիւը
կոտրած էր: Բեռերու վակօնը ևս գծէն գուրս ելած րլ-
լալով՝ կը կենար այս մահամերձին քովը, որ կը հեւար,
կը սուլէր, կը թքնէր, կը նմանէր փողոցին մէջ ինկած
այն ձիերուն, որոնց կողքը կը տապլտկի, կուրծքը կը
բարախէ, քիթերնէն ծուխեր կ'ելսեն, և որ այլես կա-
րող չեն երեւար զոյզն ջանք մը ընելու վեր կանգնե-
ռու և քալել սկսելու համար։

Ոչ մեռել կար ոչ վիրաւոր, լոկ քանի մը ճմլում-
ներ, որովհետեւ թրէնը դեռ չէր սկսած շարժիլ, և
տիրօրէն կը դիտէինք երկաթեայ հաշմանդամ կենդա-
նին, որ չէր կը այլեւ մեզ տանիլ, և թերեւս եր-
կար ատենուան համար կը փակէր ճամբան, որովհե-
տեւ, անպատճառ պէտք էր օգնական թրէն մը բերել
տալ թարիզէն։



11272-579

Առառուան ժամը տասն էր և իսկոյն օրոշեցի Ժիզօր երթալ, հոն նախաճաշելու:

Ճամբան քալելու ատեն ինքնիրենս կ'ըսէի. «Ժիզօր, Ժիզօր, հոդ մէկը կը ճանչնամ: Զո՞վ: Տեսնենք, այս քալքին մէջ բարեկամ մ'ունիմ: Յիշողութեանս անուն մ'եկաւ յանկարծ: «Ալպէր Մարանազօթ» Քոյէժի նախկին ընկեր մ'էր, զոր առնուազն 12 տարիէ ի վեր տեսած չէի և Ժիզօրի մէջ բժշկութիւն կ'ընէր: Յանախ զիս նամակաւ հրաւիրած էր: Միշտ խոստացած էի առանց խօսքս բռնելու: Վերջապէս, այս անգամ պիտի օգտու էի առիթէն:

Առաջին հանդիպածիս կը հարցնեմ. «Ո՞ւր կը բընակի Տօքթու Մարանազօթ»: Առանց վարանումի պատասխանեց. «Ռիւ Տօքին»: Արդարեւ, ցոյց տրուած տան վրայ պղնձի մը մէջ արձանագրուած էր նախկին ընկերիս անունը, Զանգակիկը հնչեցուցի: Բայց աղախինը, դուդին մազերով աղջիկ մը, դանզաղ շարժումներով, ապուշ կերպարանքով մը կը կրկնէր. «Հոս չէ, հոս չէ!»

Պատառաքաղներու և գաւաթներու ձայներ լսեցի և պոռացի. «Հէ Մարանազօթ» զուոր բացուեցաւ և խոշոր մարդ մը երեւցաւ, դժգոհի ձեւով, անձեռոց մը ձեռքին մէջ:

Արդարեւ, զայն չպիտի կարենայի ճանչնալ: Առ նուազն 45 տարեկան պիտի կարծուէր և անմիջապէս նշմարեցի՝ ամբողջ կեանքը գաւառի, որ կը ծանրացնէ, կը ծերացնէ:

Մտածումիս մէկ թոփչքովը, հասկոայ իր գոյութիւնը, իր ապրելակերպը, իր հոգիին տեսակը և իր տեսութիւնները աշխարհի մասին:

Գուշակեցի երկայն ճաշերը, որ կլորցուցած էին իր փորը, յետ ճաշու քնարերումները, քոնեաքով թրշուած ծանր մարտովութեան մը թմրութեանը մէջ, և հիւանդաներու վրայ նետուած անորոշ ակնարկները, կրակին առջեւի խորոված հաւու վրայ խորհելով:

Լոկ նշմարելով իր այտերուն կարմրագոյն ւեցնկելութիւնը, իր շրթերուն ծանրութիւնը, իր աչերուն մը աւայլ վայլը, կրցայ հասկնալ իր խօսակցութիւնները խոհանոցի, խնձօրօղիի, և մաս մը կերակուրներ եփելու մասին:

Իրեն ըսի. «Զիս չես ճանչնար: Բառու Սպօրթին եմ»: Բացաւ թեւերը և քիչ մնաց զիս պիտի խղդէր. իր առաջին խօսքը եղաւ.

— Կարծեմ, չես նախաճաշած:

— Ո՞չ:

— Ինչ բաղդաւորութիւն, սեղան նստինք, համեղ ձուկ մ'ունիմ:

Հինգ վայրկեան յետոյ, դէմ դիմաց կը նախաճաշէինք:

— Ամուրի մնացիր:

— Հիանալի:

— Եւ զուարձալիքներ ունի՞ս հոյ:

— Չեմ ճանձրանար. կ'զբաղիմ: Ունիմ հիւանդներ և բարեկամներ: Լաւ կ'ուտեմ, առողջ եմ, կ'ախորժիմ խնդալէ և որսորդութիւն ընելէ: Գործու լաւ ճամբու մէջ է:

— Կեանքը միօրինակ չէ այս փոքր քաղքին մէջ:

— Ո՞չ, սիրելիս, երբ մարդ զբաղում ունենայ, փոքրը քաղաքն ալ կը նմանի մեծին: Հոս դէպեհը և հաճոյքները նուազ այլեւայլ են, բայց, անոնց աւելի կարեւորութիւն կ'ընծայուի: Յարարերութիւնները բազում չեն, բայց, մարդիկ յաճախ իրարու կը հանդիպին: Երբ ճանչնա փողոցի մը բոլոր պատուանները, անոնք աւելի կը շահագրգռեն քան Բարիզի ամբողջ մէկ թաղը:

Ժիզօրը կը ճանչնամ իր սկիզբէն մինչեւ մեր օրերը: Չես գիտեր թէ՛ իր պատմութիւնն որչափ տխմար բան մէ՛:

— Ժիզօրցի ե՞ս:

— Ոչ, Կուրնէ քաղաքէն եմ, իր գրացին և մրցաշ
կիցը: Հսս ամէն մարդ փառքի համար կ'աշխատի, իսկ
Կուրնէյի մէջ փորի համար: Ժիզօր կ'անարդէ Կուրնէն,
որ կր ծաղրէ ժիզօրը: Այս երկիրը շտա ծիծաղաշարժ է:

Տեսայ որ իրաւ համեղ բաներ կ'ուտէի:

Մարանպօթը շողոքորթելու համար, լեզուէս շշուկ
մը հանելով ըսի, «Շատ համեղ է»:

Խնդաց. նմանապէս ես:

— Որկրամոլ ե՞ս

— Այս ալ խօ՞սք է: Լոկ սաղուշները որկրամոլ չեն:
Մարդ որկրամոլ է, ինչպէս որ արիստ է, ինչպէս որ
զարդացեալ է, ինչպէս որ բանաստեղծ է:

Ճաշակը՝ նուրբ գործարան մէ, կատարելագործելի
և յարգելի, աչքի և ականջի պէս ճաշակը պակասը կը
նմանի զրկուած ըլլալու նուրբ կարողութենէ մը, կե-
րակուրներու տեսակը զանազանելու կարողութենէ,
ինչպէս որ մարդը կրնայ զրկուիլ կարողութենէ մը՝
զանազանելու զրքի մը կամ գեղարուսատական գործի
մը յատկութիւնները: Կը նշանակէ զրկուիլ էական ըզ-
դայարանքէ մը, մարդկային գիտակցութեան մէկ մա-
սէն, և պատկանիլ հաշմանդամներու, չնորհաղուր-
կերու և տիմարներու բազում դասակարգերու, որոնց-
մէ կր բաղկանայ մեր ցեղը:

Չուկերու տեսակը չզանազանողը կը նմանի անոր,
որ կը շփոթէ Պալզաքը՝ կօժէն Սիւի հետը, Պէթովէնի
մէկ համերգը՝ զինուորական քայլերգի մը հետը և Պէլ-
վէտէրի Արօլօնը՝ զօրավար Պլամօնի արձանին հետը:

— Այդ զօրավար Պլամօնը ո՞վ է:

— Իրաւ է որ չես գիտեր: Յայտնի է որ, ժիզօր-
ցի չես կերակուրնիս աւարտենք, լեզ քաղաքը կը
պտտինեմ, իր մասին խօսելով:

Երբեմն երբեմն կը դագրեցնէր խօսքը, կամացուել
մը կէս գաւաթ գինի խմելու համար, զոր գուրգու-
րանքով կը դիտէր սեղանին վրայ դնելու ատեն:

Շատ զուարձացուցիչ էր զինքը դիտել՝ անձեռոց մը
փաթթուած վիզէն, աչքը գրգռուած, մօրուքը տարած-
ուած իր աշխատառղ բերնին շուրջը:

Զիս շնչանեղձ ընելու աստիճանն կերցուց Յետոյ,
երբ կ'ուզէի կայարան երթալ ինձէս բռնեց և զիս քը-
շեց փողոցներու մէջ:

Գաւառական սիրառն քաղաք մը, որուն կ'իշխէր իր
սերզը, եօթերորդ գարուն զինուորական երկրաչափու-
թեան էն շահեկան մէկ արձանը, իր կարգին երկայն և
կանաչ հովտի մը, ուր Նորմանախոյ խոշօր կ'զերը կ'ա-
րածին և կ'օրոճան մարդագետնի մէջ:

Տօքթէուը ինծի ըսաւ, «4000 բնակիչ ունեցող Ժի-
զօրը կը գտնուի Էօրի Եզերքներուն վրայ, որ արդէն
իշխուած է կեսարի Մելիութիւններուն մէջ:

Քեզ պիսի պտտցնեմ հոռվմէական բանակատեղիին
մէջ, որուն հետքերը դեռ տեսանելի են:

Խնդալս չկրցայ բռնել:

Երկայն փողոցէ մը կ'անցնէինք, թեթեւակի վար,
զոր մէկ ծայրէն մինչեւ միւսը կը տաքցնէր Յունիսի
արեգակ մը, որ բնակիչները ստիպած էր տուներնին
քաշուիլ:

Յանկարծ, այս ճամբուն միւս ծայրը մարդ մը ե-
րեցաւ գինով մը որ կը տատանէր:

Գլուխը առջեւէն, թեւերը կախ, սրունքները թուլ-
ցած, կը համնէր աստիճանաբար, երեք, վեց կամ տասը
քայլերով, որոնց միշտ գաղար մը կը յաջորդէր: Երբ ե-
կաւ փողոցին մէջտեղը, կը կենար, իր ստքերուն վրայ
ինքինքը կը հաւասարակուէր, վարանելով անկումի մը
և ջղային տագնապի մը մէջտեղը: Յետոյ, մէկէն ի մէկ
մնկնեցաւ տարբեր ուղղութեամբ: Յայնժամ զարնուեցաւ
տունի մը վրայ, ուր փակած կ'երեւար, իբր թէ՝ պա-
տին մէջէն ներս մտնել ուզէր: Քիչ վերջը, ցնցումէ մը
կ'ելնէր և իր առջեւը կը նայէր, բերանաբաց, աչքերը

քթթելով արեւու ներքիւ, և յետոյ, իր կոնակը բրո-
նօրէն զատելով պատէն, ճամբայ կ'իյնար:

Դեղին շուն մը իրեն կը հետեւէր հաչելով, կենալով
երբ կը կենար, ճամբայ իշնալով երբ կը մեկնէր:

— Նայէ՛, նայէ՛, ըստ Մարանպօթ, ահաւասիկ
Տիկին Հիւսօնի Վարդենին:

Ծատ զարմացայ և հարցուցի. «Տիկին Հիւսօնի
Վարդենին», ի՞նչ ըսել կ'ուզես:

Բժիշկը սկսաւ խնդաւ:

— Ո՞հ, մեր այս տեղի գինովները անուանելու
կերպ մ'է այս, Յառաջ կուգոյ հին պատմութենէ մը,
որ այժմ աւանդութեան ձեւ առած է, թէկ ճիշդ է բո-
լոր կէտերու մէջ:

— Ապուշ բան մ'է պատմութիւնդ:

— Ծատ ապուշ:

— Ուրեմն պատմէ զայն:

— Սիրայօժար: Ատենօք այս քաղաքին մէջ կար
պառաւ կին մը յոյժ առաքինի և պաշտպան առաքի-
նութեան, որ կ'անուանուէր Տիկին Հիւսօն, գիտցիր որ
քեզի իրական անուններ կ'ըսեմ, և ոչ թէ երեւակա-
յական անուններ: Տիկին Հիւսօն մասնաւորապէս կ'ըզ-
բաղէր բարենպատակ գործերով, օգնելով՝ աղքատներու
և քաջալերելով արժանի եղողները:

Կարձուկ, հանդարտ քալուածքով, ու մետաքսեայ
զլխարկով զարդարուած, քաղաքավար կին մ'էր, որ լաւ
յարաբերութիւնունէր Աստուծոյ հետ, զոր կը ներկայաց-
նէր Հայր Մալու: Տիկին Հիւսօն խորին վախ մը, քնա-
կան սոսկում մը կ'զգար մոլութենէ, զոր պերձանք
կ'անուանէ Եկեղեցին: Խնքղինքէն կ'ելլէր լսելով ա-
մուսնութենէ առաջ տեղի ունեցաղ յղութիւնները:

Արդ, տարւոյն այն եղանակն էր, յորում վարդե-
նիներ կը պսակէին Բարիզի շրջակայքը և Տիկին Հիւսօն
գաղափարը ունեցաւ վարդենի մը ունենալու ժիգօրի մէջ.

Իր գաղափարը յայտնեց Հայր Մալուի, որ իսկոյն
թեկնածուներու ցանկ մը պատրաստեց:

Տիկին Հիւսօն ծեր աղախին մ'ունէր Ֆրանսուազ
անուամբ, որ իր տիրուհին չափ խստաբարոյ էր:

Երբ Քահանան մեկնեցաւ, տիրուհին կանչեց աղա-
խինը և անոր ըստ:

— Նայէ, Ֆրանսուազ, ահաւասիկ աղջիկները զոր
ինձի կ'առաջարկէ Հայր Մալու, առաքինութեան մըր-
ցանակի համար: Աշխատէ հասկնալու թէ՛անոնց մասին
ի՞նչ կը խօսուի քաղքին մէջ:

Ֆրանսուազ զործի սկսաւ: Հաւաքեց բոլոր պատ-
մութիւնները, կատկածները, ըսի ըսաւները: Բան մը
չմոռնալու համար, զայն կը նշանակէր ծախքին քովը,
խոհանոցին տեսրակին մէջը, զոր ամէն առտու կը յանձ-
նէր Տիկին Հիւսօնի, որ կը կարդար, իր ակնացները իր
նիհար քթին վրայ զետեղելէ վերջը:

Հաց.... Զորս սու

Կաթ.... Երկու սու

Կարագ.... Ութը սու

Մալվինա Լեկիք աղջիկը, անցեալ տարի, յանցանի
մը մէջ բնութեցաւ Մարիւրէն Բոլու մանչին հետը:

Ոշխարի զիստ մը... Քաններեք սու

Աղ.... Մէկ սու

Ոօգալի Վարինելը, Ոխպուտէ անտառի մէջ, մա-
զործ Սեզար Բլենինապի հետ տեսաւ լուացաւար Օնեղին,
20 Յուլիսին առտու կանուխին:

Ծողգամ.... մէկ սու

Քացախ.... երկու սու

Վարունգ.... նրեք սու

Փօքեֆին Տիւրէնիս կը կարծուի որ մելք զործեր է
բլրակցելով Օբօրիւնի զաւակին հետը, որ Ռուէն զին-
ուորուրիսն կ'ընէ եւ իրեն բլրատարով գդակ մը խրկած
է իրեւ նուէր:

Այս խղճամբտ քննութենէն ուեէ աղջիկ անվաս չեւաւ : Ֆրանսուազ կը հարցաքննէր ամէն որ, դրացիները, հայժմայթիները, վարժապետը, զպրոցին Սէօրերը և կը հաւաքէր էն չնշին զրոյցները :

Եւ որովհետեւ, ամբողջ աշխարհի մէջ ուեէ աղջիկ չկայ, որուն մասին կնքամայրերը չշաղակրատեն, բոլոր երկրին մէջ չգտնուեցաւ դեռասի աղջիկ մը՝ զրպարտութեան չենթարկուած .

Արդ, Տիկին Հիւոօն կ'ուզէր որ, Ժիզօրի առաքինութեան վարդենին, Կեստրի կնոջը պէս, բնաւ չկառկածուէր, և իր սպասուհին խոնանոցին տետրակը կարդալով սոսկացած, այլայլած և յուսահատած էր :

Յայնժամ, մինչեւ շրջակայ գիւղերը տարածեցին քննութեան շրջանակը և ոչինչ գտան :

Քաղաքապետին կարծիքը առին: Իր պաշտպանեալները ձախողեցան, Տօքթ. Պարպէսօլի ցոյց տուածներն ալ տարբեր յաջողութիւն չանեցան, հակառակ իր գիտական երաշխատորութիւններու ճշդութեանը :

Արդ, առտու մը Ֆրանսուազ, գնումներէ վերադառնալէ յետոյ, իր տիրուհիին ըստւ .

— Կը տեսնէք, Տիկին, եթէ կ'ուզէք մէկը վարձատրել, բոլոր երկրին մէջ լոկ իզիտօրը կայ:

Տիկին Հիւոօն երազակին վիճակի մը մէջ մնաց: Լաւ կը ճանչնար իզիտօրը, պտղավաճառ վերծինի զաւակը: Առակի կարդ անցնող իր ժուժկալութիւնը ժիզօրի համար ուրախութիւն էր, բազում տարիններէ ի վեր: Աղջիկները կը զուարձանային զինքը բարկացնելով:

Իզիտօր քսան տարեկանէն աւելի էր, խոշոր դանդաղ և վախկոտ, կ'օգնէր իր մօրը առեւտուրին, և ամբողջ օրեր կ'անցնէր պտուղներու կամ բանջարեղէններու կեղեւը հանելով, զրան առջեւ, աթոսի մը վրայ նստած :

Հիւանդոտ վախ մ'ունէր շրջազգեստներէ, որ կը

գոցէին իր աշխերը երր յաճախորդուհի մը խնդալով կը սայէր իրին, և ամենուն ծանօթ այս երկչուութիւնը զինքը խաղալիք կ'ընէր երկրին բոլոր չարածնի խօսակցութիւններուն:

Համարձակ բառեր, դիտումնաւոս ակնարկութիւններ զինքը անչափ շուտ կը կարմրցնէին որ, Տօքթ. Պարպալ զինքը մականուանածէր՝ ամօթխածութեան ջերմաչափը: Դիտե՞ր թէ չէր գիտեր, բարու կը հարցնէին դրացիները շրաբճիները: Արգեօք չգիտցուած և ամօթալի գաղտնիքներու պարզ նախազգացումներն էին, և կամ սիրոյ հարամայած վաս հպումներու ցասումն էր, որ կը թուէր այնքան ուժգին յուշել մրգավաճառ Վերժիսի զաւակը:

Աղջիկները կը զուարձանային իր առջեւէն բազմիցս անցնելով և այնպիսի խօսքեր նետելով որ, Իզիտօր առւն կը փախչէր:

Ուստի, Տիկին Հիւոօն երազի մէջ ինկած էր: Արդարեւ, անառարկելի, նշանակելի, բացառիկ առաքինութեան մը պարագան էր իզիտօր: Սկեպտիկներէն իսկ ոչ ոք չպիտի կրնար, չպիտի կասկածեր թէ՝ իզիտօր ուեէ թեթե անհազանդութիւն ըրած ըլլար բարոյականի ուեէ օրէնքին գէմ: Ոչ Սրճարանի մը մէջը տեսած էին զինքը, գիշերը երբեք փողոցներու մէջ հանգիպած չէին: Կը պառկեր ժամը ութիւն և կ'արթնար չորսին: Կատարելութիւն մ'էր, մարգարիտ մ'էր:

Սակայն Տիկինը գեռ կը վարանէր: Իր մտքին դէմ էր իգական վարդենիի մը տեղը դնել արական վարդենի մը, ուստի, որոշեց Հայր Մալուի կարծիքը առնել:

Դայր Մալու պատախանեց, ինչ բան կ'ուզէք վարձատրել, Տիկին, չէ մի որ առաքինութիւնը: Առոր արական կամ իգական ըլլալը ձեզի համար ինչ կարեւորութիւն ունի: Առաքինութիւնը յաւիտենական է, ոչ հայրենիք ունի և ոչ ալ սեռ:

Այսպէս քաջալերուած Տիկին Հիւսօն գնաց գտնելլ
քաղաքապետը, որ խոկոյն հաւանեցաւ և բառ.

— Աղութը արարողութիւն մը պիտի բնենք, և ու-
րիշ տարի մը, եթէ կին մը գտնենք Իզիտօրի չափ ար-
ժանի, կին մը կը վարձատրենք:

Իզիտօր, երբ լուր ունեցաւ, յոյժ կարմրեցաւ և
շատ գոհ կ'երեւար:

Արդ, վարձատրութեան պատկումը որոշուեցաւ 15
Օգոստոսին, տօն Մարիամ Կոյսի և Նաբօէն Կայսեր:
Թաղապետութիւնը որոշած էր մեծ փալը
մը տալ այդ հանդիսաւորութեան, որուն համար
տրամադրած էին Քուրօնօյի բեմը, հրապուրիչ երկարա-
ձը գումը հին բերդին, ուր Քիչ յետոյ քեզ պիտի տանիմ:

Հանրային դաղափարի բնական մէկ յեղաշրջու-
մովը, մինչեւ ցարդ Իզիտօրի ծաղրուած առաքինու-
թիւնը, յանկարծ, յարգելի և նախանձելի բան մեղաւ,
քանի որ 500 ֆրանք պիտի բերէր իրեն, առաւել խը-
նայողութեան մնառուկի տետրակիկ մը, և վերածախուե-
լի յարգանքի և փառքի լեռնակ մը: Այժմ, աղջիկները
կը ցաւէին իրենց թեթեւութեանը, իրենց ծիծաղներուն
իրենց ազատ շարժուձեւերուն համար, և Իզիտօր, թէն
միշտ պարկեցաւ և երկչոս, գոհացածի պղտիկ երեւոյթ
մառած էր, որ կը բացատրէր իր ներքին ուրախու-
թիւնը:

15 Օգոստոսի նախօրեակէն սկսեալ, Տօֆին փողո-
ցը զարդարուած էր դրօշակներով: Թափօրին անցնելիք
ճամբուն վրայ ծաղիկներ սփռած էին:

Քաղքին հրամանատարը, իր մարդերով, եկաւ առ-
նել Իզիտօրը իր մօրը խանութէն Վարդենին (Իզիտօ-
րը) երեւցաւ սեմի վրայ:

Սպիտակ կտաւէ հագուստ մը կը կրէր, յարդէ գըլ-
խարկով մը, որուն վրայ իրեւ զինանշան կ'երեւար,
նալնջենիի ծաղիկներէն փունջ մը:

Ետևէն երեցաւ իր պաշտպանը, իր կնքամայրը,
Տիկին Հիւսօն յաղթական: Իր թեւը մտաւ գուրս ել-
նելու համար և քաղաքապետը Վարդենիին միւս կողմը
կեցաւ: Թափուկները կը զարնէին: Հրամանատարը պո-
աց: «Զէնքերը խոնահցուցէ՞ք»:

Թափօրը մկան դէպի եկեղեցի երթալ. շրջակայ
գաւառներէ խուժած ահազին բազմութեան մը մէջէն:

Յետ կարծ արարողութեան մը, և Հայր Մալուի
մէկ յուզիչ ճառին մեկնեցան Քուրօնօյի բերգը, ուր
աեղան պատրաստուած էր վրանի մը ներքեւ:

Սեղան նստելէ առաջ, քաղաքապետը խօսք առաւ:
Ահաւասիկ իր ճառը: Զայն գոց սորվեցայ, որովհետեւ
շատ անոյշ է:

«Երիտասարդ, բարեսէր կին մը, Տիկին Հիւսօն,
զոր ամբողջ երկիրը իմ միջոցաւ կը չնորմաւորէ, եր-
ջանիկ մտածումը ունեցած է այս քաղքին մէջ հիմնե-
լու առաքինութեան մրցանակ մը, որ թանկագին քա-
ղալերութիւն մը պիտի ըլլայ այս գաւառի բնակիչնե-
րուն մատուցուած:

«Դուք առաջին պսակեալն էք՝ ժուժկալութեան և
իմաստութեան այս գերգաստանին: Լաւ հասկցէք զայս,
ձեր ամբողջ կեանքը պէտք է պատասխանէ այս եր-
ջանիկ սկզբնաւորութեան և ներկայութեան այս բազ-
մութեան, յանձնառու կ'ըլլաք հանդէպ քաղաքին,
հանդէպ ամենուս, ձեր երիտասարդութեան բնտիր օ-
րինակը տալ մինչեւ մահը:

«Մի մոռնաք, երիտասարդ, յոյսի այս դաշտին
մէջ նետուած առաջին հատիկն էք, տուէք միշտ ձեզմէ
սպասուած պտուղները:»

Քաղաքապետը երեք քայլ առաջ զնաց, բացաւ
թեւելը և իր սրտին վրայ սեղմեց Իզիտօրը, որ կը
հեծկտար:

Յետոյ քաղաքապետը իր մէկ ձեռքին մէջ դրաւ

մետաքսեայ քսակ մը , որ ոսկի կը հաջէր 500 ոսկիէ ֆրանք . . . և միւսին մէջ՝ խնայողութեան մնառուիք տերակիկ մը : Հանդիսաւոր ձայնով ըստ . «Յարգանք առ առաքինութիւն» :

Տիկին Հիւսօն իր աչքերը կը սոբէր :

Շարուեցան սեղանի մը շուրջը, ուր խնձորքը պատրաստուած էր :

Պատկները կը յաջորդէին իրարու։ Դեղին փնձորօղին
և կարմիր զինին կ'եղալը անալին և կը խառնունէին
ստամոքսերու մէջ։ Տիկին Հիւսօն երբեմն կը շտկէր իր
սեւ մետաքսեայ գլխարկը և կը խօսէր Հայր Մարտի հետ

Իզիտօր կ'աւտէր և կր խմեր, այնպէս որպէս բնաւ կերած կամ խմած չէր: Ամէն րանէ կ'առնէր, առաջին անդամ կը նշմարեր որ, անոյշ է զգալ՝ իր վորբին լեցու իլը յաւ բաներով, որոնք նախ հաճոյք կը պատճառն բերնէն անցնելու ատեն:

Բաժմականառերու ժամը հասաւ; Բազմաթիւ
եղան և ծափահարուեցան: Գիշերը կ'իջնար, կէսօրէ ի
վեր սեղանի վրայ էին: Հովախն մէջ արդէն կը ծածա-
նէին նուրբ շոգիներ, մարգերու և առուակներու գիշե-
րային թեթեւ հագուստաը, արեգակը կը հպէր հորիզո-
նէն, հեռուէն կովերը կը պոռային արածատելիի մու-
ռախուղներուն մէջը: Լրացած էր, զէպի ժիղօր կ'երթա-
յին: Տիկին Հիւսօն թեւը մտաւ իշխաօրի, որուն տուաւ
բաղում խրատներ, ստիպողական . ընտիր:

Կեցան մրգավաճառուհին խանութին առջեւ, և
Արդենին յանձնուեցաւ իր մօրը տունը:

Վերջինը տուն վերադարձած չէր։ Իր ընուանիքին կողմէ հրաւիրուած էր տօնելու իր զաւակին յաղթանաւ։ Իր քրոջը տունը ճաշած էր։

Ուստի, իզիտօր մինակը մնաց խանութին մէջ, ուր
կը թափանցէր գիշերու.

Աթոռի մը վրայ նստաւ, գրգռուած գինիէ և հր-

պարտութենէ և դիմեց իր շուրջը Ստեղծվածք, կա-
զմակեր և սոխեր՝ գոյ սենեակին մէջ կը սփռէին բան-
ջարեղէնի իրենց զօրաւոր հոտը, որուն կը խառնուէին,
ելակներու ազդու և մեղմ հոտ մը, և դեղձի կողովնե-
րու փախուսիկ և թեթեւ բուրում մը:

Վարդենին գեղձ մառաւ և ախորժակով կերաւ,
թէե իր փորը լեփլեցուն էր: Յանկարծ, ուրախութենէն
յի՞մարացած, սկսաւ պարել և գրպանին մէջ հնչում մը
լսուեցաւ:

Զարմացաւ, ձեռքերը խօթեց գրպաններուն մէջը և
դուրս հանեց հինգ հարիւր ֆրանքնոց քսակը, զոր մոռ-
ոած էր գինովութեան պատճառաւ: 500—ֆրանք: ինչ
հարստութիւն: Ասկիները հաշուեսկղանին վրայ սփոեց,
զանոնք զանդաղօրէն կոչուէր ամենքը միասին կարենալ
տեսնելու համար: Տախտակի վրայ կը փայլէին, թանձր
շուքի մէջ, զանոնք կը հաշուէր ու կը հաշուէր: Կրկին
շանոնք քսակին մէջ դրաւ և սահեցուց որսանին մէջ,

Ա՞վ պիտի գիտնայ և ո՞վ պիտի կարենար ըսել տե-
լի ունեցող պայքարը Վարդենիին հոգիին մէջ, չարին
բարիին միջեւ, Սատանային աղմկափից յարձակու մը
որ խորածանիկութիւնները, փորձութիւնները, զոր նետեց
սյս երկչու և կոյս սրտին մէջ։ Ի՞նչ թելազգութիւններ,
սխորժակներ հրահրեց Սատանան, յուզելու և կորսըն-
նելու համար այս Ընտրեալը։ Տիկին Հիւսօնի Ընարեա-
ռ դրաւ իր գլխարկը, որ գեռ կը կրէր նարնջենիի ծա-
խիկներէ պղտիկ փունջը, և տան ետիւի պղտիկ փողո-
էն ելնելով, Կորսուեցաւ գիշերուան մէջ։

Մբավաճառ է էրժինին, տեղեկացած ըլլալով որ,
տղան տուն եկած է, անմիջապէս վերադարձաւ և պա-
րագ գտաւ տունը Ապասեց, նախ առանց զարմանալու,
յեւոյ քառորդ ժամ վերջը, տեղեկութիւն ուղեց։ Տօ-

քին փողոցի դրացիները տեսած էին զիտօրի ներս մէտ-
նելը, բայց, բնաւ չէին տեսած դուրս ելնելը:

Ուստի, սկզան փնտռել իզիտօրը, զոր չկրցան գրտ-
նել: Պաղավաճառա հին, մտահոգ, զիմեց քաղաքապե-
տին, որ ըստ թէ՝ Վարդենին ձգած էր իրենց տան առ-
ջւ: Տիկին Հիւսոն նոր պտուկած էր և թ լուր տրուե-
ցաւ որ, իր պաշտպանուալը անհետացած էր Անմիջապէս
դրաւ իր գլխարկը և անձամբ եկաւ. Վէրժինին մօտ:
Վերժինի, որուն ժաղովրդական հոգին շուտ կր յուզաէր
տաք տաք կուտար՝ իր կաղամբներուն, սահպղններուն
և սոխերուն մէջտեղը:

Սրկածէ կր կ'ասկածէին: Ո՞ր մէկը: Լուր արուե-
ցաւ ոստիկանութեան, որ խուզ սրկութիւն մը կատա-
րեց քաղքին շուրջը, և ճամբու վրայ գտան նարնջի
ծաղիկներէ փունջը: Փունջը դրուեցաւ սեղանի մը վր-
րայ, որուն շուրջը կը խորհրդակցէին իշխանութիւննե-
րը: Վարդենին պէտք է եղած ըլլայ զոհը խորամանկու-
թեան մը, մեքենայութեան մը, նախանձի մը, բայց
ինչպէս: Ի՞նչ միջոց գործածած էին առեւանդելու այս
անմեղը և ի՞նչ նպատակաւ:

Առանց գտնելու փնտռելէ յոդնած՝ իշխանութիւն-
ները քնացան: Վերժինին մինակ արթուն մնաց ար-
ցունքներու մէջ:

Սրէ, յաջորդ երեկոյ, երբ Բարիզի ճեպընթացը ան-
ցաւ, Ժիզօր քաղաքը ապշութեամբ իմացաւ որ Վար-
դենին այն թրէնով ճամբորդած էր և հանդարտօրէն ի-
ջած մեծ քաղքին կեդրոնը:

Բաւական յուզում տիրեց գաւառին մէջ: Քաղաքա-
պետին և Բարիզի ոստիկանութեան միջեւ նամակներ
փոխանակուեցան. որոնք ուեէ հետեւանք չունեցան:

Օրերը իրարու կը յաջորդէին, շարաթը անցաւ:

Առառու մը, Տօքթ. Պարպաղ, որ կանուխէն դուրս
ելած էր, դրան մը սեմին վրայ նստող մարդ մը նրա-

մարեց, որ մոխրագոյն կտաւէ հագուստ ունէր և կը
քնաւար գլուխը պատին դէմ: Մօտեցաւ և ճանչցաւ ի-
զիտօրը Ուզելով զայն արթնցնիւ չաջողեցաւ: Նախ-
կին Վարդենին կը քնանար խորունկ քունով մը, ան-
դիմադրելի՝ մտահոգիչ, և բժիշկը զարմացած, գնաց օգ-
նութիւն փնտռել, կարենալ երիտասարդը տանելու հա-
մար Պօնչըրվալ դեղարանը:

Իզիտօրը երբ վերցուցին, պարապ սրուակ մը երեւ-
ցաւ, որ իր մարմնոյն ներքեւ պահուած էր: Զայն հո-
տոտելէ վերջ, ոժիչկը յայտարարեց որ, օզի պարունա-
կած էր: Այս նշանը օգտակար եղաւ տրուելիք խնամք-
ներու: Յաջողեցան. Իզիտօր զինով էր, ութը օրուան
արրեցած, այնքան գինով և զզուելի որ, հնակարկատ
մը անգամ չպիտի ուզէր սօտենալ իրեն:

Զինքը լուացին և ներս փակեցին, չորս օր գուրս
չելաւ բնաւ: Կերեւար ամչցած լվալ և զզացած: Իր
վրայ չգտան 500 ֆրանք պարունակող քսակը և ոչ ալ
խնայողութեան մնտուկի տետրակիկը և ոչ ալ արծաթ-
եայ ժամացոյցը, նուիրական ժառանգութիւն՝ ճգուած
իր պող սվաճառ հօրդէն:

Կինգերորդ օրը, Տօֆին փողոցին մէջ ինկաւ: Ճե-
տաքրքիր ակնարկներ կը հետեւէին իրեն. որ գլուխկոր
և աչերը փախուսիկ, կը քալէր տուներու երկայնքէն: Տեսողութիւնէ կորսուեցաւ, երբ քաղքէն ելաւ դէպի հո-
վիտը, բայց, երկու ժամ յետոյ երեւեցաւ, կատակարա-
նելով և զարնուելով պատերու: Գինով էր, լիովին
զինով:

Ոչինչ կրցաւ շտկել զինքը:

Իր մօրմէն վոնտուած, սայլակապան եղաւ, և կը
քչէր ածուխի կառքերը, Բուքրիսէլ տան, որ տակաւին
այսօր գոյութիւն ունի:

Իր գինովի համբաւը այնքան մեծցաւ, այնքան հե-
ռուները տարածնեցաւ որ, կվրէօյի մէջ անգամ դեռ

կը խօսին Տիկին Հիւսոնի Վարդենիին մասին, որուն
անուանմբ կը կոչուին գաւառին ստահակները:

Բարիք մը բնաւ չկորսուիր:

...
Տօքթ. Մարանպօթ կը շփէր ձեռքերը, երբ վեր-
ջացուց պատմութիւնը: հարցուցի իրեն.

- Վարդենին ճանչցա՞ր դուն:
- Այո՛, պատիւ ունեցայ փակելու իր աշքերը:
- Ի՞նչ բանէ մեռաւ,
- Զառանցանքի տագնապի մը մէջ, բնականարար:



11282-577

ԶԱԽՈՂԱՆՔ ՄԸ

Քօրսիքայէն անցնելով Թիւրէն կ'երթայի:

Նիսէն նաև Նստայ Պատթիայի համար, և երբ բաց
ծովը ելանք, կին մը նշմարեցի նաւակամուրջին վրայ
նստած, բաւական սիրուն և պարկեշտ, որ կը դիտէր
հեռուները ինքնիրենս լսի. «Աս, անաւասիկ ճամբար-
դութիւնս!»


Նստելով առջիւ զինքը կը դիտէի. ինքնիրենս հար-
ցնելով այն ամէն բանը, զոր մարդ կրնայ հարցնել,
նշմարելով անծանօթ կին մը, որ կը շահագրգոէ ձեզ,
իր կացութիւնը, իր տարիքը իր նկարագիրը: Յետոյ,
մարդ տեսածէն կը գուշակէ իր չտեսածը:

Աչքով և մտածումով կը չափես օրաաժին մէջնը
և շրջագեստին ներսութը: կը նօթագրես երկարութիւնը
մարմինին, երբոր նստած է, կը ջանաս երեւան հանել
կրունկը: կը նշմարես տեսակը ձեռքին, որ երեւան պի-
տի հանէ իր բոլոր կապակցութիւններուն նրբութիւնը,
և տեսակը ականջին, որ լաւագոյնս կը բացատրէ ըս-
կըզբնաւորութիւնը, քան միշտ վիճելի ծննդեան վը-
կայագիր մը:

Կը ջանաս լսել իր խօսիլը՝ թափանցելու իր հոգիին
հակումներուն, իր ձայնին շնչտերովը: Որովհետեւ,
խօսքի շնչտը և գունաւորումները կը ցուցնեն փորձա-
ռու դիտողի մը՝ հոգիի մը ամբողջ խորհրդաւոր շաղ-
կապումները: Թէե ըմբռնումը դժուար, միշտ կատար-
եալ համաձայնութիւն կայ ընդմէջ մտածումի և զայն
բացատրող գործարանաւորութեան:

Ուստի, ուշազիր կը դիտէի դրացուհիս, փնտանելով
նշանները, վերլուծելով իր շարժումները. իր բոլոր
կերպարանքէն սպասելով յայտնութիւններ:

Պզտիկ տօպլակ մը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ մը հանեց:



Ձեռքերս չփեցի — «Կարգացածդ բաէ՛ ինձի՝ քեր ողբաշի ըսեմ ինչ որ կը մտածես :»

Խ-բագրականը կարդալ սկսաւ, դու և բարեկամա-
կան երեւայթնվ մը : Թերթին անունը ուշագրութիւնու
գրաւեց, Շփոթած մնացի: Կը կարդար երգիծաբան Շօ-
լի մէկ քրոնիքը : Ուրեմն, այս կինը կը սիրէր Քրան-
սական սրամտութիւնը, նրբութիւնը և աղը և նոյնիսկ
պղպեղը: Մտածեցի տեսնել հակափորձը :

Գացի քովը նստելու և սկսայ ոչ հուադ ուշադրութեամբ կարդալ բանաստեղծութեանց հատոր մը, զարմանկնումի պահուն գնած էի, Սիրոյ Երգը, Հեղինակ Ֆէլիքս Թրանք:

Դիտեցի, զրքին վերնադիրը արագ : ակնարկով մը
նշմարած էր, թույունի մը նման, որ կը բռնէ վազող
ճանճ մը : Բաղում ճամբորդներ մեր առջեւէն կ'անց-
նէին զայն դիտելու համար, բայց, կինը կը թուէր լոկ
մտածել իր քրոնիկին վրայ: Երբ աւարտեց, թերթը մեր
երկուքին մէջտեղը դրաւ :

զինքը բարեւեցի և իրեն ըստ .

— Թոյլ կուտաք ինծի, Տիկին, ակնարկ մը նետել
այս լրագրին վրայ:

— Անշաւ շու Պարսկ :

— Արդ միջոցին, կրնա՞մ ձեզ մատուցանել ոտանառնեու այս հատուրը :

— Անշուշտ, զուարձալի՞ է:

Այս հարցումէն քիչ մը վրդովուեցայ: Զնարցուիր
ոտանառներու հաւաքածոյի մը համար թէ՝ զուարձալի
է, պատասխանեցի.

— Աւելի լաւ է, հրապուրիչ, նուրբ և արուեստագիտական:

— *Sult. n-pkfls;*

Գիրքը առնելով բացաւ և սկսաւ կարդալ զարմացողի երեւոյթով մը, ինչ որ կը հաստատէր յաճախ ու տանիաւոր կարդացած չըլլալը:

Յանկարծ, իրեն հարցուցի.

Ախորժեցա՞ք

— Այս, բայց, կը սիրեմ ինչ որ շատ զուարժ է, զայնական եմ:

Ակսանք խօսիլ: Հասկցայ որ կինն էր հարիւրապետի
մը, Աժաքքիօյի պահականոցին մէջ, և կ'երթար միա-
նալ իր ամոռւսինին:

Քանի մը վայրկեանի մէջ կռահեցի որ, բնաւ չէր
սիրէր իր ամռախնը.՝ սակայն, զայն կը սիրէր վերապա-
հութեամբ, ինչպէս որ կը սիրուի մարդ մը, որ չէ կըր-
շած գոհացնել յայսերը, նշանտուքին օ, երուն մէջ ար-
թընցած։ Զայն պատցուցած էր պահականոցէ պահակա-
նոց, շատ մը պղտիկ ախուր քաղաքներու մէջէն։ Այժմ
զայն Աքածծիօ կղզին կը կանչէր, որ ախուր ըլլալու էր։
Ոչ, կեանքը գուարծալի չէ ամեն մարդու համար։ Նա-
խարարութիւնը ազնիւ չէր եղած իր ամռախնին համար
որ գոփելի ծառայութիւններ ունեցած էր։

Խոսեցանք իր նախամիրած բնակութիւններուն համար

— Բարիզը կը սիրէք

— Օ՞չ, Պարսն, որչափ կը սիրեմ Բարիզը: Կարե՞-
մի է ընել նմանօրինակ հարցում մը:

Եւ սկսաւ խօսիլ Յարիգէ, այնպիսի եռանդոտ, խանդավառութեամբ որ, ժոածեցի. «Պէտք է խաղալ այս թէլի վրայ։»

Կը պաշտէր Բարիզը, հեռուէն, զսպուած որկրամութեան մը կատաղութեամբը, զաւառացիի ճարահատ կիրքով մը, յիմար անհաջերութեամբը վանդակի մէջ ևզոյ թռչունի մը որ իր պատուհանէն ամբողջ օրը կը դիտէ անտառը:

Սկսաւ զիս հարցուվորձել, մտահոգօրէն թօթովե-
լով. կ'ուզէր հինգ վայրկեանի մէջ ամեն բան հասկնալ:
Գրտէր բոլոր ծանօթ անձերու անունները, և տակաւին
որիչներ որոնց մոսին խօսուիլը չէի լսած:

Մէկ ժամ վերջը, հարցումները կ'սկսէին հատնիլ, և իր հետաքրքրութիւնը էն երեւակայական կորպոր գոհացուցած ըլլալով, կարզը ինծի եկաւ խօսելու :

Բարիզի կեանքէն տնելեաբներ պատմեցի իրեն։ Մը տիկ կ'ընէր իր բոլոր ականջներովը և օրտովը։ Օ՛չ, անշուշտ, աղուոր գաղափար մը կաղմած ըլլալու էր Բարիզի նշանաւոր և զեղեցիկ կիներու մատնու Ասոնք կը նամեծաբական արկածներ էին, ժամադրութիւններ, առագ յաղթանակներ և կրքու պարտութիւններ։

— Ուրեմն, մեծերու կեանքը այսպէ՞ս է։

Զարաձնի կերպարանի գով մը խնդացի։

— Հարկաւ. միջակ դասակարգն է որ, տափակ և միօրինակ կեանք մը կ'անցնէ, առաքինութեան տեսակէտը, և որուն համար ոչ ոք կարեւորութիւն կուտայ իրենց։

Եւ, սկսայ արմատէն ցնցել առաքինութիւնը, հետնանքի խոշոր հարուածներով, փիլիսոփայութեան եւ ծաղրանքի հարուածներով։

Անպատկառօրէն կը ծաղրէի խեղճերը, որ կը ծերանան առանց ճանչնալու անոյշ, նրբին բան մը. առանց վայելելու գաղտագողի համբոյրներու հեշտին հասձոյքը։ Որովհետեւ, ամուսնացած են փեթակի պէս մարդու մը հետը, որոնց ամուսնական վերապահնումը զանոնք կը թողու երթալ մինչեւ մահ, անդիտանալով բոլոր նրբացեալ զգայնացումները և բոլոր շքեղ զգացումները։

Ցետոյ. յիշեցի ուրիշ անէքտօթներ, մասնաւոր սենեակներու և խորամանկութիւններու մասին, ասոնց ամենուն ծանօթ ըլլալս յիշեցի։ Եւ, իրեւ նախարար, միշտ գովեստը կ'ընէր յանկարծական և գաղտնի սիրոյ։

Գիշերը կը հասնէր, խաղաղ և ջերմիկ գիշեր մը։ Խոշոր նաւը, ցնցուելով իր մեքենայէն, կը սահէր ծուլու վրայ, մանիշակագոյն, աստղաղարդ երկնքի մը անսահման ձեղունին ներքեւ։

Պդտիկ կինը այլես բան մը չէր ըսեր։ Դանդաղօրէն շունչ կ'առնէր և երրեմն կը հառաչէր։ Յանկարծ կանգնելով ըսաւ։

— Պառկելու կ'երթամ, դիշեր բարի, պարսն եւ ձեռքս սեղմեց։

Գիտէի որ վաղը կառք պիտի նստէր, որ Պասթիայէ Աժաքքի կ'երթայ լեռներու մէջէն, և որ ամբողջ գիշեր ճամբան կը մնայ։

— Գիշեր բարի Տիկին, պատասխանեցի։ Իմ կարգիս գացի հնջել։

Յաջորդ առտու անմիջապէս վարձեցի կառքին եւ բեք նստատեղիները, երեքն ալ մինակ ինծի համար։ Երբ Պասթիայէ մեկնելիք հին կառքին մէջ նստելու վրայ էի, մայրամուտին, քշողը ինծի հարցուց թէ՝ չպիտի հաւանէի անկիւն մը տալ կնոջ մը։

Մէկէն ի մէկ հարցուցի. ո՞ր կնոջ։

— Աժամսի գացող սպայի մը կնոջը։

— Հաէք իրեն որ, սիրայօժար տեղ մը պիտի տամ իրեն։

Կինը եկաւ և ըսաւ թէ՝ ամբողջ օրը անցուցած էր քնանալով։ Ներողաւթիւն խնդրեց և չնորհակալութիւն յայտնելով կառք մտաւ։

Պնդորէն գոցուած կառք մէկը, որուն երկու դուռներէն լոկ լոյս կը մտնէր։

Ուրեմն, գլուխ գլուխի էինք ներար։ Կառքը արագօրէն կ'երթար յետոյ մտաւ լերան մէջ։

Անուշարոյր խոտերու ուժգին և թարմ հոտ մը ներս կը մտնէր, այն ուժգին հոտը, զոր թօրսիքա կը սփուէ իր շորջը, այնքան հեռուն որ, ծովայինները վայն բացերը կ'զգան, թափանցող օդ մը՝ մարմինի մը բուրումին նման, կանաչ հողի քրտինքին պէս, թաթիսուած բուրումներով, զոր տաքուկ արեգակ մը կը հանէ իրմէ և կը շոգիացնէ փչող հողմին մէջ։

Սկսայ իւոսիլ Բ սրիզէ, զոր ջերմատ ուշադրութեամբ
մտիկ կ'ընէլու Պատմութիւններս համարձակ կը գառնու-
յին, ճարպիկօրէն վրան բաց, քօղարկուած բառերով լի,
այն բառերով, որ կը բռնկեցնեն արիւնը:

Գիշերը ամբողջավին տիրած էր: Այլիս բան մը չէի
տհաներ, և աչ իսկ գեռատի դէմքին սպիտակ բիծը: Լոկ
կառասալնին լապտերը կը լուսաւուէր չորս ձիերը:

Երթեմն կր լսուէր ժայռերու մէջ հոսող հեղեղի մը
շշուկը, խանուելով զանգակիկներու ձայնին, յետոյ,
կը կորսուէր հեռուները մներ ետին:

Թեթեւօրէն երկնցուցի ոտքս որ հանդիպեցաւ ի-
րենին, զոր ետ չքաշեց: Յայնժամ, այլիս շշարժեցի, և
ձեւը փոխելով, խօսեցայ համակրանքի մասին: Զեռքս
երկնցուցած էի և հանդիպեցայ իրենինին: Զայն ետ ետ
չքաշեց:

Միշտ կը խօսէի, աւելի մօտ իր ականջին, բոլո-
րովին ըերնին մօտը: Արդէն կ'զգայի իր սրտին բարա-
խումը կուրծքին վրայ: Արագ և ուժգին կը զ արնէր—
լաւ նշան— յայնժամ, զանգաղօրէն, շրթերս զրի իր վը-
զին վրայ, զայն նուածած ըլլալուս վստահ էի, այնքան
վստահ էի որ, գրաւի պիտի մտնէի...

Բայց, յանկարծ, ցնցում ս'ունկցաւ, իբրեւ թէ
քունէ արթնցած ըլլար, ցնցում մը, որ զիս նետեց
կառքին միւս պատին զէմ: Յետոյ, նախ քան կարենալ
հասկնալս և բանի մը վրայ մտածելս առաջին անգամ
ստացայ հինգ կեց ահանիլի ապտակներ, յետոյ դաս-
տակի հարուածներու կարկուտ մը, որ կը տեղար վլ-
րաս, որածայր և կարծր, զարնելով ամենուրեք, և չէի
կրնար անոնց առաջքը առնել խօրին լուսիթեան մէջ, որ
կը աշխաղատէր այս պայքարը:

Զեռքերս կ'երկնցնէի, ընդունայն ջանալով ըըռ-
նել իր թեւերը: Յետոյ չգիտնալով ի՞նչ ընելիքս, յան-
կարծ ետ դարձայ, որպէսզի լոկ կրնակիս վրայ տեղա-

յին իր յարձակումները և պլուխս պահեցի փեղկերու
մէջը:

Կ'երեւայ որ հասկցաւ, թերեւս հարուածներու ձայ-
նէն, յուսահատի այս ձեւէս, և մէկէն ի մէկ զաղրեցաւ
զարնուէ:

Քանի մը երկվայրկեան վերջը, անկիւնը իր տեղը
նստաւ և սկսաւ հեծկլտալով լալ, որ մէկ ժամ տեւեց
առնոււազն:

Յոյժ մտահոգ և ամօթապարտ էի, Պիտի ուզէի
խօսիլ, բայց, ի՞նչ ըսել իրեն: Ոչնչ կը զանէի, ներու-
ղութիւն իննդրել: ապշութիւն էր: Իմ տեղս, դուք ինչ
պիտի ըսէի՞ք, գործերնիդ զացէ՞ք:

Այժմ թեթեւօրէն կուլար և երբեմն կը հառաչէր, ո-
րոնք կը տիսրեցնէին զիս: Պիտի ուզէի զայն միսիթա-
բել գրկել, որպէս կը գրկեն ախրած տղաները, իրմէնե-
րողութիւն իննդրել, իր ծունկերուն վրայ իյնալ: Բայց,
չէի համարձակեր:

Այս կացութիւնները անասնական են:

Վերջապէս, հանդարտեցաւ, և մեր անկիւնը նըս-
տանք իւրաքանչըւրնիս, անշարժ և մունջ, մինչ կը թա-
ւալէր կառքը, երբեմն կանգ առնելով: Երբ ախոսի մը
լապտերին լոյսը կառքէն ներս թափանցէր, երկուքս ալ
շուտով կը գոցէինք աչքերնիս, զիրար բնաւ չղիտելու
համար: Յետոյ, կառքը նորէն ճամբայ կ'ելնէր, և միշտ,
քօրսէքեան յեռներու անուշաբոյր օղը կը զգուէր մեր
այտեւը և շրթունքը, և զինիի պէս զիս կը թմրեցնէր:

Աստուած իմ, ի՞նչ լու ճամբորդութիւն... եթէ ըն-
կերունիս նուազ տիսմար եղած ըլլար:

Բայց, ցերեկուան լոյսը մեղմօրէն սահեցաւ կառ-
քին մէջ, առաջին արշալոյսի տժգայն լոյս մը: Դիտեցի
դրաց ունիս: Քնան ոլ կը ձեւացնէր: Յետոյ արեգակը,
ըեռներու ետեւէն ծագելով, շուտով լոյսով ողողեց բո-
ւրովին: Կապտորակ անսահման ծովախորշ մը, արջա-

պատուած կրանիթէ գագաթներով խոշոր լեռներէ : Ծովածոցին եղերքը, ձերմակ քաղաք մը կ'երեւարմեր առջեւը :

Դրացուհիս յայնժամ արթննալ ձեւացոց բացաւ իր աչքերը (կարմիր էին): Վարանեցաւ և ամինալով թոթովեց:

- Շատ չանցած պիտի հասնի՞նք:
- Այս՝ Տիկին, գրեթէ մէկ ժամ վերջը:

Հեռուները դիտելով յարեց.

- Շատ յոգնեցուցիչ է գիշեր մ'անցնել կառքի մէջ:
- Այս՝ երակները կը կարուին:
- Մանաւանդ, ծովէ անցնելչ վերջը:
- Օ՛հ, այս՝ :
- Մեր առջեւինը Սժաքքիօն է:
- Այս՝ Տիկին:
- Պիտի ուզէի արդէն հասած բլալ:
- Կը հասկնամ զայն:

Իր ձայնին շեշտը քիչ մը խռոված էր. իր կերպարանքը տւրուած, իր աչքը քիչ մը խուսափողական Սաւկայն կը թուէր մոռցած ըլլալ ամեն բան:

Կը հիանայի, իր վրայ, բնազդաբար որքան խռամանկ են այս արարածները: Ի՞նչ զիւանազէտներ:

Ժամ մը վերջը հասանք արդարեւ: Հերքիւլի պէս խոշոր սպայ մը, գրաւենեակին առջեւ կեցած, թաշկինակ կը ճօճէր նշմարելով կառքը:

Դրացուհիս ցատկեց ախորժակով իր թեւերուն մէջ զայն գէթ քսան անզամ գրկեց կրկնելով:

— Ինչպէս ես, լա՞ւ ես, որքան կը փութայի քեզ տեսնել:

Պայուսակս իջեցուցած էին և կամացուկ մը ետքաշուելու վրայ էի, երբ պոռաց ինծի:

— Օ՛հ, Պարոն, առանց լինծի մնասբարով ըսելու կը մեկնիք:

Թոթովեցի. Տիկին, ձեզ կը թողէի ձեր ուրախութեանը մէջ:

Յայնժամ, ըստ իր ամուսին:

— Սիրելիս, շնորհակալոթիւն յայտնէ պարսնին, շատ ազնիւ գտնուեցաւ ամբողջ ճամբորդոթեան միջոցին, նոյնիսկ ինծի տեղ մը մատոյց կառքին մէջ, զոր լոկ իրեն համար վարձած էր: Մարդ երջանիկ է այսպիսի համակրելի ընկերներու հանդիպելուն:

Ամուսինը ձեռքս սեղմեց, համոզուած շնորհակալոթիւն յայտնելով ինծի:

Գեռաատի կինը կը ժպաէր մեղ դիտելով:

Իսկապէս, շատ տխմար երեւոյթ մը ունեցած ըլլալու էի....

ՄՈԼԵԳՆԱԾԸ.

Սիրելի ժրնէվիէվս, կուզե՞ս որ քեզ պատմեմ մեղալուանի ճամբորդութիւնու ի՞նչպէս կրնամ համարձակիլ, Ա՞ն, խորածանկ, ինձի բան մը բասձ չէիր, գուշակել տուած չէիր ի՞նչպէս տասնիւթը ամիսէ ի վեր ամուսնացած ես. կ'ըսես որ լաւագոյն բարեկամուհիս ես, դուն որ ատենօք բան մը չէիր պահեր, գութը չունեցար ինձի կանխաւ իմաց տալու:

Եթէ զիս զգուշացնէիր, եթէ ձգած ըլլայիր որ պարզ կասկած մը մտնէ հոգիս մէջ, արդիլած պիտի ըլլայիր զիս՝ խոշոր տխմարութիւն մը գործելէ, որմէ դեռ կ'ամըչնամ, որուն համար ամուսինս պիտի ինդայ մինչե իր մահը, և որուն միակ պատասխանատոն գուն ես:

Ինքինքս սոսկալիօրէն ծաղրելի ըրի յաւէտ, քու պատճառաւդ յանցանք մը գործեցի, որուն յիշողութիւնը ընաւ չպիտի չնջուի: Ա՞ն, եթէ զիտցած ըլլայի...

Բայց, ահա համարձակութիւնը կ'ունենամ քեզ գըրելու և կ'որոշեմ ամենինչ ըսել: Խոստում ըէ է չխնդալու:

Մի սպասէր կատակերգութիւն մը, ասիկա տրամ մէ:

Կը յիշես ամուսնութիւնս: Միենոյն գիշերն իսկ պարտէի մեկնիլ մեղալուանի ճամբորդութեան մը համար: Արդարեւ, չէն նմաներ Բոլէթի, որուն պատկերը այնքան սրամտօրէն գծուած է վէպի մը մէջ, Ամուսնութեանն նուրգ: Եւ եթէ մայրս ինձի ըսած ըլլար ինչպէս Տիկ. Հօթրըթան իր աղջկան. «Ամուսինդ քեզ իր թեւերուն մէջ պիտի առնէ եայլն» իրաւ որ Բոլէթի պէս չպիտի պատասխանէի, խնդալէ պայթելով. «Աւելի հեռու մի երթար, մամա, ես այս բոլորը գիտեմ, քեզի չափ...»

Ես ընաւ բան մը չէի գիտեր, և մաման որ ամեն բանէ կը սոսկայ, չհամարձակեցաւ շօշափել այս նուրբ հարցը:

Արդ, երեկոյեան ժամը հինգին իւնաց տուինոր կառքը մեղ կ'սպասէ: Նրաւ իրեալները մեկնած էին, պատշառաւ էի:

Կը յիշեմ պայուսակներու շնուկը սանդուխին վրայ և քթին ձայնը հայրիկին, որ չէր ուզեր լալ: Զիս գրկուու պահուն, խեղճ մարդը ըսաւ. «Բաջ եղիր», իրեւթէ ակռայ քաշել տալու կ'երթայի Մայրս կուլար: Ամուսինս զիս կը նեղէր, զգուշացնելէ այս յուզիչ մնաքրարովներէ, ես ալ շատ կուլայի, թէն երջանիկ էի: Ասիկա չրացարուիր, բայց ձիշդ է: Յանկարծ զգացի որ բան մը շրջազգեստս կը քաշէր. Պիտու շունն էր, առառունէ ի վեր մոգուած: Խեղճ կինդանին ինձի մնաքրարով կ'ըսէր իր զիտցած ձեւովք: Ասիկա պզտիկ հարուած մը եղաւ սրտիս ևմեծ փափաք մ'աւնեցայ գրկելու շունն: Բոնեցի զայն, զիտես որ զաստակի մը մեծութիւնը ունի, և սկսայ համբոյրներովս զինքը լափել: Կը խենդանամ կենդանիները շոյելով: Ասկից անոյշ հաճոյք մը կ'զգամ, սարսուոի տեսակներ կ'ունենամ, հեշտին է:

Խսկ ինքը խենդի պէս էր. թաթերը կը շարժէր, զիս կը լզէր. թեթեւօրէն կը խածնէր. զօր գոհ եղած ատեն սովորութիւն ունէր: Յանկարծ. քիթս իր ատամներուն մէջ առաւ, և զգացի որ վնաս կը պատճառէր ինձի: Պոռացի և շունը գետին դրի: Զիս իրապէս խածած էր, ուզելով խաղալ:

Քիթէս արիւն կ'ենէր: Ամեն ոք տիրեցաւ. Զուր քացախ և սպիտակեզէններ բերին: Ամուսինս ուզեց անձամբ զիս խնամել: Բան մը չէր արդէն: Կարծես ասեղով եղած երկու պզտիկ ծակեր: Հինգ վայրկեան յետոյ, արիւնը կեցաւ և մեկնեցայ:

Որոշուած էր: Նօրմանտիոյ մէջ ճամբորդութիւն պիտի կատարէինք վեց շաբթուան չափ:

Երեկոյեան Տիկը հասանք: Երբ «Երեկոյ» ըսեմ, «կէս գիշեր» կը հասկնամ:

Դիմակո որչափի կը սիրեմ ծովը : Ամուսինիս ըսի որ ,
ծովը չտեսած չպիտի պառկիմ : Շատ նեղացած երեւ-
ցաւ , ինդալով հարցուցի իրեն :

— Արդեօք քուն ունի՞ք :

— Ոչ , բարեկամուհիս , բայց , հոսկնալու էիք որ ,
ի աճապարեմ մինակ մնալու ձեզի հետ :

Զարմացայ:

— Հետո մինակ՝ բայց թարիզէ ի վեր արդէն վա-
կոնին մէջ մինակ ենք :

— Այո՞... բայց ... վակօնին մէջ միեւնոյնը չէ
ինչ որ պիտի ըլալինք մեր սենեակին մէջ :

Տեղի չտուի.

— Շատ լաւ . մինակ ենք ծովեզերքին վրայ . և ա-
հաւասիկ ամենը :

Յայտնի էր որ չէր ախորժեր ասկից , ըստու .

— Քանի որ այնպէս կը փափաքէիք :

Ծքեղ գիշեր մէջ , մին այն գիշերներէն , որ ձեր
հոգիին մէջ կ'անցնեն մեծ և անորոշ գիշերներ , աւելի
**զգացումներ քան մտածումներ , որոնք փափաքիլ կու-
տան թեւերը բանալով երկինքը գրկելու : Ի՞նչ կ'ըսիմ**
Մարդ կը կարծէ որ , անձանօթ բաներ պիտի հասկնայ :

Երազ կայ օդին մէջ , թափանցող բանաստեղծու-
թիւն , տեսակ մը անհուն գինովութիւն , որ կուգայ
աստղերէ , լուսինէ , արծաթագոյն և շարժող ջուրէ , կեանքէ
առնուած լաւագոյն վայրկեաններ են ասոնք : Անոնք
տարբեր կը ցուցնեն գոյութիւնը , գեղեցկացած . հեշ-
տին , յայտնութիւններն են , այն բանի որ կընայ ըլ-
լալ . . . կամ այն բանի որ պիտի ըլլայ :

Սակայն , ամուսինս անհամբեր կ'երեւար տուն դառ-
նալու : Իրեն կ'ըսէի . «Պազ կ'զգաս» . Ո՞չ . «Ուրեմն
նայէ սա վարի պզտիկ նաւին , որ կը թուի քնանալ
ջուրի վրայ : Ո՞ւր կարելի է աւելի լաւ ըլլալ քան հոն ,
կը փափաքէի մինչեւ առաջու հոս նստիլ : Կ'ուզես որ
սպասենք արշալոյս :

Կարծեց որ զինքը կը ծաղրէի , զիս գրեթէ բռնի օ-
թէլ քեց : Եթէ գիտայի ա՞ն , թշուառականը :

Երբ մինակ մնացինք , ամչցայ , նեղուեցայ , կ'երդ-
նում որ առանց գիտնալու թէ՝ ինչու : Վերջապէս զին-
քը թուալեթի յատկացուած սենեակը անցուցի , և
ես պառկեցայ :

Օհ՝ սիրելիս , ինչպէս ըսել զայս . բայց , ահաւա-
սիլ : Անշուշտ , կարծեց որ , ծայրայեղ անմեղութիւնս
չարաճճութիւնն է , պարզութիւնս՝ խորամանկութիւն ,
վստահող ինքնալքումն՝ բաքրիք մը , և կարեւորութիւն
չտուաւ նորբ վերաբերումներու , զոր պէտք է գործա-
ծել բացատրելու , հասկցնելու . և ընդունիլ տալու նմա-
նօրինակ գաղտնիքները՝ չկասկածող և բնաւ չպատ-
րաստուած հոգիի մը :

Եւ , յանկարծ . կարծեցի որ ինքզինքէն ելած էր :
Յետոյ , վախը զիս պաշարեց , և ինքնիրենս հարցուցի
թէ՝ արդեօք կ'ուզեր զիս սպան նել : Մարդ երբ սոս-
կում ունենայ , այլես չտրամաբանէր , այլես չխորհիր ,
կը խեղինայ : Սոսկալի բաներ երեւակայեցի : Մատեցի
լրազիրներու ծանուցած այլեայլ զէպքերուն , խորհրդա-
ւոր ոճիրներու , թշուառականներէ ամուսնացած ազդիկ-
ներու պատմութիւններու , զոր կը փսփսայի : Արդեօք
կը ճանչնայի այս մարդք : Սոսկումէ ինքնակորոյս կը
կոռուէի՝ ետ մղելով զայն : Նոյն խսկ ափ մը մազ խլեցի
մօրուքին մէկ կողմէն , ինքզինքս աղատելու այս ջան-
քով , ոտքի ելայ պոռալով «օգնութեան հասէք» : Դէ-
պի զուռ վազեցի , նիգերը վերցուցի , և գրեթէ մերկ ,
ինքզինքս սանդուղին վրայ նետեցի :

Ուրիշ դուռներ բացուեցան : Չեռքերնին լոյս բըռ-
նած և գիշերանցով ուրիշ մարդիկ երեւացան : Անոնցմէ
միոյն թեւերուն մէջը ինկայ , ինսգրելով իր պաշտպա-
նութիւնը : Մարդը ամուսինիս վրայ յարձակեցաւ :

Մնացեալը չեմ գիտեր : կը կոռւէին , կը պոռային .

յետոյ խնդացին. խնդուք մը որուն չես կրնար հաւատալ ։ Վարէն վեր ամբողջ տունը կը խնդար ։ Քօրրիտօրէ զուարթ ձայներ կուգային, խնչպէս նաև մեր վրայի սենեակներէն։ Խոհանոցին աշխատաւորներն անգամ խնդալէ կը մարէին։

Ուրեմն, մտա՛ծէ օթէլի մէջ. . . .

Յետոյ ինքզինքս մինակ գտայ ամուսինիս հետը, որ նախնական քանի մը բացատրութիւն տուաւ ինծի, ինչպէս որ կը կատարեն քիմիական փորձ մրդայն գործադրելէ առաջ։ Բնաւ զոհ չէր. Մինչեւ առառու լացի, և զուռները բացուելուն պէս մեկնեցանք։

Այս չէ ամենը։

Յաջորդ օրը Բուրվէլ հասանք։ Ամուսինս ինծի խընամք և համակրանք կը շուայէր։ Առաջին դժողովութենէ մը վերջ, հրապուրուած կ'երեւար ։ Առջի օրուան արկածէն ամցած, կրցածիս չափ հաճելի և հնազանդ եղայ։

Բայց, չես կրնար երեւակայել սոսկումը, զզուանքը և ոխը, զոր Հանրի ներշնչեց ինծի, երբ գիտցայ խայտառակ գաղանիքը, զոր անքան խնամքով կը պահեն ազդիկներէ։ Յուսսահատած, մեռնելու աստիճան տիրած էի, ամեն բանէ յոգնած, փափաք ունէի դառնալու ծնողացս քովը։

Յաջորդ օրը Եթրըթաթ հասանք։ Բոլոր լոգանք ընողները յուզուած էին։ Պղտիկ շունէ մը խածնուած երիտասարդ կին մը մհուած էր։ Երբ գայն պատմեցին կերակուրի սեղանին վրայ, սարսուռ մը զզացի կոնակիս մէջ։ Անմիջապէս ինծի թուեցաւ որ քիթս կը ցաւէր. տարօրինակ բաներ զգացի անդամներուն երկայնքը։

Գիշերը չքնացայ. բոլորովին մոռցած էի ամուսինս Եթէ շունէ խածնուելուս համար կատղած մեռնէի.՝ Միւս օր, օթէլի ալիրոջմէն մանրամասնութիւններ ուղղեցի։ Անոելի բաներ պատմեց ինծի։ Ծովափին վրայ

պտտելով անցուցի օրը, այլևս չէի խօսե՞ս, կը խոկայի։ Կատաղութիւնը ի՞նչ սարսափելի մահ։

Հանրի կը հարցնէր ինծի. «Ի՞նչ ունիս, տխուր կ'երեւաս։» Կը պատասխանէի. «Բայց ոչինչ, ոչինչ։» Կորուսեալ ակնարկս կ'ուզզուէր ծովուն, առանց զայն տեսնելու. ազարակներու, դաշտերու վրայ, առանց կարենալ ըսելու թէ՝ ի՞նչ կը տեսնէի։ Ուեէ զնով չպիտի ուզէի խոստովանիլ զիս չարչարող մտածումը։ Քանի մը իրական, սուր ցաւեր անցան քիթիս մէջ. ուզեցի տուն դառնալ։

Հազիւ օթէլ եկած, սենեակս փակուեցայ՝ վէրքին նայելու համար։ Զէր տեսնուեր. բակայն չէի կրնար անոր մասին կասկածիլ, որովհետեւ զաւ կը պատճառէր։

Իսկոյն կարճ նամակ մը գրեցի մօրս, որ տարօրինակ երեցած ըլլալու է իրեն։ Անմիջական պատասխան մը կ'ուզէի անշան հարցութերու։ Ստորագրելէ վերջ աւելցուցի։ «Մանաւանդ, մի մոռնար ինծի լուրեր տալ Պիտուի մասին։»

Յաջորդ օր, չկրցայ ուտել, սակայն, մերժեցի բըժկի մը այցելութիւնը։ Ամբողջ օրը նստած մնացի ծովափին վրայ, դիտելով լոզգողները։ Գէր, նիհար, իրենց տգեղ հագուստներովք կուգային. սակայն, խնդալու փափաք չունէի։ Կը մտածէի. «Երջանիկ և՛ն այս մարդիկ. Շունէ խածնուած չեն. անոնք պիտի ապրին. բանէ մը չեն վախնար կրնան ուզածնին պէս զուարճանալ։»

Ամեն վայրկեան, ձեռքս քիթս կը տանէի քննելու համար։ Զէր ուռեր։ Եւ հազիւ օթէլ գարձած՝ սենեակս կը գոցուէի զայն դիտելու հայելիի մէջ։ Օչ. եթէ գոյնը փոխուէր, անմիջապէս մեռած կ'ըլլացի։

Գիշերը յանկարծական համակրանք մը զգացի ամուֆինս համար, յուսահատի համակրանք մը. ի՞նձի բարի երեցաւ, իր թեւին վրայ կոթնեցայ։ Քսան անգամ, քիչ մնաց պիտի ըսէի իրեն զզուելի դաղտնիքս, բայց լուեցի։

Յածաբար չարաչար գործածեց ինքնալքումս և հոգիս տկարացումը, իրեն դիմադրելու ոյժ չունեցայ, ոչ ալ կամք. կրնայի ամէն բանի տոկացած ըլլալ.

Միւս առտու մօրմէս նամակ ստացայ. հարցումներուս կը պատասխանէր. բայց. Պիտուի մասին բան մը չէր խօսէր: Անմիջապէս մտածեցի. «Մեռած է և զայն ինէ կը պահեն», Յետոյ, ուղեցի անմիջապէս հեռագիր մը քաշել, մտածում մը զիս արգիլեց. «Եթէ իրաւ մեռած է. ինձի չպիտի ըսեն զայն: Համակերպեցայ երկու օր ևս տագնապի մէջ անցնել: Կրկին գրեցի: Պահանջեցի որ ինձի զրկեն չունը, որ պիտի զրուցնէր զիս որովհետեւ քիչ մը կը ձանձրանալի:

Կէսօրէ վերջ վրաս գողղալ եկաւ: Լեցուն գաւաթ մը չէր կրնար վերցնել առանց կէսը թափելու: Հողեկան վիճակս ողբալի էր: Իրիկուան մօտ, ամուսնէս փախչելով եկեղեցի վաղեցի, ուր երկար ատեն աղօթեցի:

Վերադարձին նոր ցաւեր զզացի քթիս մէջ, և գեղարան մը մտայ, որ լուսաւորուած էր: Խօսեցայ պղտիկ բարեկամուհիներէս միոյն մասին, որ իրը թէ խածնուած էր, և ուղեցի իմանալ իր պատուէրները: Հանոյակատար մէկն էր: Զիս առատօրէն տեղեկացուց: Բայց, մինչ կը խօսէր անոնք արդէն կը մոռնայի, միտքս այնքան շփոթած էր: Միտքս սա մնաց. «Մաքրողականները յաճախ յանձնարարելի են» Բազում տեսակ սրուակներ գնեցի, զանոնք բարեկամուհիս դրկելու պատճառարանութեամբ:

Հանդիպած շուներս ինձի վախ կը պատճառէին և արագօրէն կը փախչէի իրենցմէ: Յաճախ ինձի թռւեցաւ որ, փափաք ունէի զանոնք խածնելու:

Անոելիօրէն յուղեալ գիշեր մանցուցի: Ամուսնոս ատկից օգտուեցաւ: Միւս օր, կանուխէն, մօրմէս պատասխան ստացայ: Կ'ըսէր որ, Պիտուն շատ առողջ էր: Բայց, զինքը վտանգի ենթարկել պիտի նշանակէր,

զայն մինակը ճամբելով երկաթուղիով: Ուրեմն, զայն չէին ուզեր զբկել, բայց է մեռած էր:

Նորէն չլրցայ մնաւալ: Գալով հանրիին: կը խորեար: Քանիցս արթնցաւ: Անչացած էի:

Միւս առտու, ձավու բաղնիք մ'ըրի, ծով մտնելու առեն քիչ մնաց անհանգիստ պիտի ըլլացի, ցուրտէն այնքան գէջ եղայ: Սրուշ քնիուուս մէջ սոսկալի ուարսուունէր կ'զգայի, բայց, այլես քիթէս չէի տառապեր:

Պատահարար ինձի ներկայացուցին բաղնիքներու քնիք լրժիշկը, ազնիւ մարդ մը: Ծայրացեղ ճարպիկութիւն գարծեցի՝ խօսքը պարագային բերելու հափ որ պղտիկ շունս քանի մը օր առաջ զիս խածնած էր, և իրն հարցուցի թէ՝ ինչ պէտք է ընել եթէ բորբոքում տեղի ունենար: Ակաւ ինդալ և պատասխանեց. — «Ձեր այդ կացութեանը մէջ, Տիկին, մէկ միջոց կը ահանի՞, այն է նոր քիթ մը մնել ձեզի ։»

Եւ, որովհետեւ չէի հասկնար, աւելցուց.

— Սրուշն, այդ ալ ձեր ամուսնին կը վերաբերի: Երբ ձգեցի զինքը, ոչ առաջ զացած էի, ոչ ալ տեղեկութիւն ստած:

Հանրի, այդ դիշեր, շտա տրախ և երջանիկ կ'երթեար: Գիշերը թագինո եկանք, բայց չոպանեց տեսամուսինին վերջաւոյ ութեանը և առաջարկեց տուն դառնալ. իրեն հետեւեցայ, այլիս ոչինչ կը շահագրգուէր զիս:

Բայց չէի կրնար մնկողին մնալ. ամբողջ ջիզերս ցնցուած էին. ինքն ալ չէր կրնար քնանալ: Զիս կը ցոյէր, կը չոյէր, կարծես թէ գուշակած էր օրքան տառապիլս. իր զգուանքներուն կ'ենթարկաւէի, նոյն իսկ առանց զանոնք հասկնալու, առանց մտածելու անոնց գրայ:

Բայց, մէկէն ի մէկ, յանկարծական տագնապ մը, տարօրինակ և ջախչախիջ, պաշարեց, զիս: Սոսկալի աղաղակ մը հանեցի, և ինձի փակչող ամուսնոս ետ

Նըելով, սինեակին մէջ խոյացայ, երես դու ոքին պիտի զարնէի : Կատաղութիւնը սկսած էր, սօսկալի կատա, զութիւնը կօրսու ած էի:

Հանրի զիս վերցուց, սարսափահար, կու զէր զիսանալ : Բայց լուցին: Այժմ համակիրոված էի: Մահր սպասեցի: Գիտէի որ, քանի մը ժամանակ դադարէ վերջ, ուրիշ տաղնապ մը պիտի ունենայի, յետոյ ուրիշ մը, յետոյ ուրիշ մը մինչեւ վերջինը, որ մահացու պիտի ըլլար:

Թող տուփ որ զիս կրնին անկողին տանին: Արեւածագին, ամունիս գրդոիչ ձեւերը նոր տաղնապ մը տաղ բերին, որ առաջնէն երկար եղաւ: Փափաք ունէի պատուիլու, խածնելու, ոռնալու, սարսափելի բան էր սակածն: Նուազ ցաւափին քան ինչ որ չէի կարծեր:

Սոտուան ժամը ծին, չորս գիշերէ ի վեր տաղին անդամ բիլարվ քնացայ:

Ժամը 11ին, սիրուած ձայն մը զիս արթնցուց: Մայրիկն էր, որ նամակներէն սարսափած, վազած եւ կած էր զիս տեսնելու:

Չեռքին մէջ բռնած էր խոշոր կողով մը, ուրիշ յանկարծ ոռնացումներ լուսեցան: Ինքզինքէն ելած և յոյսէ խենդեցած, տոպրակը առի: Զայն բացի, և Պիտուն անկողնիս վրայ ցատկեց, զիս կը գրկէր, կը ցատկուէր, բարձիս վրայ կը գլուրէր, ուրախութեան յիմարութենէն բռնուած:

Այս՝ սիրելիս, եթէ ուզես կը հաւատաս ինծի: Դեռ լոկ յաջորդ օր հասկացայ:

Օհ, երեւակյութիւնը! ինչպէս կը գործէ այն: Եւ մոտածել թէ՛ հաւատացած էի... ըսէ՛ չափազանց տիմարութիւն չէ այս:

Բնաւ մէկու մը խոստովանած չեմ, զայն պիտի հասկնաս, այնպէս չէ՛, այս չորս օրերու շարշարանիքը: Մտածէ՛: Եթէ ամուսինս զիսցած ըլլար...: Արդէն զիս բաւական կը ծաղրէ Յուրվիլի արկածիս համար: Ասկից զատ, շատ չեմ ցաւիր իր կատակաբանութիւններուն համար: Մարդ ամեն բանի կը վարժուի կեանքի մէջ...:

IV

ԴԵՐԱՏԻ ԱՌՋԿԱՆ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Այս՝ այդ գիշերուան միշատակը բնաւ չպիտի չընչուի: Կէս ժամու միջ ցին, անպարտելի ճակատադրականութեան չարտաշուր զզացուքը ունեցայ: Այս սարսուոր վրաս եկաւ, զոր կ'աւաննան հանքի հորերուն մէջ թշնալու ատեն: Մարդկային թշուասութեան այդ օւր ցատակին հպայ, հասկաց որ, պարկեցտ կեանքը անկարելի էր ուժանց համար:

Կէս զիշերը անցած էր: Վօտիզիլէ կ'երթայի Տրիւ փողոց, արագ քայլերով անցնելով պուլուարէն, ուր կը զավէին հովանոսները: Ջուրի փոշի մը կը ճօճէր, կը ծածկէր ելեքտրականլապտերներու ծայրերը, տիրեցնելով փողոցը Մայթը կը փայլէր, աւելի կաշուն քան թշրջուած: Այսպ քալողները բան մը չէին տեսներ:

Երջազգեստնին վերցուած աղջիկներ կ'սպասէին զուռնարու ստուերին մէջ: կը կանչէին կամ ձեր ականչին կը նետէին երկու բասեր, մթին և անախորժ: Քանի մը վայրկեան կը նետէւէին մարգուն, զոր կը լքէին իսկիյն, տեսնելով անօդուառութիւնը իրենց բոլոր կրծերուն:

Ամենէն կանչուեցայ, զիստէս բանեցին, յոդնեցայ և զզուանքէ բարկացայ: Յանկարծ, տեսայ որ, այդ կիւներէն երեքք յիմարի պէս կը վազէին, քանի մը արագ րաներ ուղղելով միւսներուն: Բայց, միւսներն ալ կ'ըսկուէին վազել, փախչիլ ձեռքերու մէջ բռնելով իրենց աջազգեստը, կարենալ աւելի արագ երթալու համար: Այդ գիշեր, սատիկանութիւնը ուռկան նետած էր բռնելու համբային կիները:

Եւ յանկարծ: իմինիս ներքեւ թեւ մը զգացի մինչ ինելակորոյս ձայն մը կը փափսար ականջիս մէջը, «Փըրկեցէք զիս, պարոն, փրկեցէք զիս, զիս մի ձգէք»:

Դիտեցի աղջիկը: Քսան տարեկան չկար, թէն ար-

դէն թառամած էր : Երեն ըսի : «Հետո կեցիր» ամրմուց : «Ո՞չ, մերսի» :

Կը համեմինք սատիկաններու գծին մէջ, զոր բացին ինձի թօղլատրելու համար անցնիլ :

Տրիւ փողոցին մէջ մտայ :

Ընկերուհիս հարդուց ինձի :

— Տունս կուգա՞ս :

— Ո՞չ :

— Ի՞նչու համար ոչ ինձի մասուցիր դժւարին ծառայութիւն մը, զոր բնաւ չպիտի մոռնամ:

Իրմէ պատուելու համար պատասխանեցի :

— Արագնեաւ ամուսնացած եմ:

— Ասկից ի՞նչ վաս կուգայ :

— Աւ կը բաւէ, տղաւ Քեզի փրկեցի գործէն: Աշըմ զիս հանգիստ ձգէ :

Փողոցը ամայի և սեւ էր, իբապէս շարաշուք: Եւ թես սեղմող այս կինը՝ աւելի սարսափելի կ'ընէր տրիւ րութեան այն զգացումը, որ զիս կը պաշտէր:

Ուզեց զիս զրկել, բայց, ետ քաշաւեցայ վախոյ և խոշոր ձախով ըսի :

— Կայնէ, զիս հանգիստ ձգէ :

Կատաղութեան տեսակ մը շարժում ունեցաւ, յանկարծ, սկսաւ հեծկտալ: Ինքնինքս կարմացուցի, տրիւրած առանց հասկնալու:

— Տեսնինք, ի՞նչ ունիս:

Իր արցունքներուն մէջ մոլտաց :

— Եթէ գիտնայիր, ասիկա զուարթ բան մը չէ:

— Ինչ բանը:

— Այս կեանքը:

— Ի՞նչու ընարեցիր զայն:

— Միթէ յանցանքը ի՞մս է:

Այս զատապարտեալին համար տեսակմը հ'տաքրութիւն ունեցաւ և իրեն ըսի :

— Էսէ ինձի պատմութիւնը :
Զայն պատմեց ինձի :

*

Տասնեմոց տարիկան էի և կը ծոռայէի, կիօնի մէջ ցորեն ծախող Պ. Լրապլի քովու Ծնողքս մեսած էին, մէկր չունէի: Կը համեմափ որ ուրս զիս կը դիտէր աշ պուշ ձեւով և կը չփէր արտերաւ Խնդիրը հասկցայ ապահովաբար: Պ. Լրապլ կրօնակը ձերու կ մէր, որ ամեն կիրակի պատարագի կ'երթար Բնաւ չպիտի հաւատայի որ՝ կարող էր այսպէս բան մը ընել վերջապէս:

Օր մը սենեակո եկաւ զիս բռնելու: Իրեն զիմադրեցի և զործին զնաց:

Մեր զիմացը նպարավաճառ մը կար, որուն խանութի կարսոնը համելի էր, այնպէս որ իրեն թող կուտայի կատակաբանել: Ասիկա ամեն մարգուալ կը պատահի, այսպէս չէ: Արդ, զիշերները զուոր բաց կը ձգէի և կարսոնը կուգաբ գանել զիս:

Բայց, գիշեր մը Պ. Լրապլ շնուկ կը լոէ: Վեր կ'ենէ և կարսոն Անթուանը կը տեսնէ, զոր կ'ուզէ ըսպաննել: Աթոսի, չուրի ամանի և ամեն բանով պատերազմի մը կ'սկսի: Ես կիթառս առնելով փողոց փախաց: Արդէն մեկնած էի:

Կը վախնայի, չափազանց: Դուորի մը ներքեւ հագուեցաց: Յետոյ, սկսայ շիփշիտակ քալելս վատահօրէն կը կարծէի որ մէկր սպանուուած էր և արդէն ոստիկանները զիս կը փնտէին: Ռուէնի մեծ ճամբան բռնեցի: Ինքնիրենս կ'ըսէի որ կրնայի լու մը պահուըտի Ռուէնի մէջ:

Այնքան մութ էր որ չէի տեսներ փասերը, և կը լսէի շուները, որ կը հաշէին աղարակներու մէջ: Կարեւ մի գիշերը իմանալ ըսլը աղմուկները Թուշունները որ կը ծչան խողխողուող մարդու պէս, պոռացող կենդա-

նիներ, անասուններ որ կը սուլին, և յետոյ, այնչափ
բաներ որ մարդ չտակնար: Հառու պէս եփա նւրաքան-
չիւր շշուկին իւսչ կը հանէին կարելի չէ երեւ և կայել թէ
մարդ տակից որշափ կը յաւզուի երբ ծագեցաւ օրը, ոս-
տիկաններու վախը զիս բանեց և սկսայ վազել: Յետոյ,
հանդարանեցայ:

Ասոր հետ մէկանեղ անօթութիւն, զզացի – հակա-
ռակ չփոթութիւննա: Բայց, բան տը չունէին, և ոչ իւսկ
մէկ սու – մասցած էի դրամն՝ աշխարհի վրայ ամրող
ունեցած՝ տասնեռութ ֆրանք:

Քալել պարապ փորով մը, որ, կ'երդէ... Օգր տաք
էր: Արեւը կ'այրէր: Կևորը անցաւ, միշտ կը քալէի:

Յանկարծ, ձիերու գալր լսեցի հտեւէս. ետ դար-
ձայ: Աստիկաններ, արիւնս սառեցաւ, կարծեցի որ պի-
տի իջնալի. բայց, ինքզինք բոնեցի: Զիս կեցուցին և
զիտեցին: Իրենցմէ տարիքուտ ըստա.

- Բարի լոյս, Օրիորդ,
- Բարի լոյս, պարոն:
- Տեսնենք, այսպէս ո՞ւր կ'երթաք:
- Խուեն կ'երթամ ծառայելու անդ մը, ուրիշ
կանչուած եմ:
- Այսպէս ստաքով քալելով:

Սիրտս կը բարախւէր և ալես չէի կրնար խօսիլ:
Վաղելու փափաքը ունէի արոնքներուն մէջ: Բայց, ան-
միջապէս զիս պիտի բռնէին, կը հասկնաք:

Մարդուկը վերսկսաւ:

- Միասին ճամբայ պիտի ընկնք մինչեւ Պարան-
թին, Օրիորդ, քանի որ կը հետեւինք միւնայն ու-
ղեզնին:
- Գոհունակութեամբ, Պարոն:

Սկսանք խօսիլ: Կրցածիս չափ հաճոյ կը ձեւանա-
լի: Այնպէս որ, կը հաւատային բնաւ չպա-
տահած բաներու: Արդ, երբ անտառէ մը կ'անցնէինք,
ըստ ինձի:

– Օրիորդ, կ'ու զէք որ հանգիստ մը բնէինք մար-
դագետնի վրայ:

Առանց այդ մասին մոտածելու պատասխանեցի:

– Բայտ ձեր փափաքին, պարոն:

Յետոյ, վար իջնալով: իր ձին միւսին տուաւ, այ-
նունեաւ երկուք ալ անտառը մտանք:

Ալես ոչ : սել չկար: Եթէ տեղս րլլայիք, դուք
ի՞նչ պիտի բնէիք Ու զամք ստացաւ և յետոյ, ինձի բ-
ռու: «Պէտք չէ մոսնալ բնէկերը և Եւ ետ գնաց քոնե-
լու ձիերը, մինչ միւսը քովս եկաւ: Խնորէն այնչափ
ահցայ որ, կուլայի: Բայց, չէի համարձարկեր ոի-
մազրել, կը հասկնաք:

Աչս նորին ճամբայ ինկանք, բայց, այլիս չէինք
խօսեր. չատ սուգ ունէի պրախս մէջը. Ալես չէի կրնար
քաւել, այնչափ անօթի էի որ: Սակայն, գաւաթ մը զի-
նի խոց ցցին ինձի զի զի մը մէջ, զինին զիս ուժացուց
ատենուան մը համար: Յետոյ, ինձի հետ Պարանթինէն
չանցնելու համար, սկսան քառամրակ արշաւել ձիերը:
Յետոյ, նստայ փսիս մէջ և լսցի, բոլոր արց ւնքներս
հսկեցուցի:

Դեռ երեք ժամ քալեցի նեռէն համելու համար,
ուր մտայ զիշերաւան ժամք ութին. Նախ, բոլոր այդ
լոյսերը զիս շացուցին: Յետոյ, չէի զիտեր ուր նստիլ.
Ճամբաներու վրայ փու և խոր կայ, ուր կարելի է պառ-
կիլ՝ քնանալու համար. բայց քաղաքներու մէջ ոչինչ:

Սրանքներս կը մտնէին մարմինիս մէջ և կը կար-
ծէի իջնալ: Յետոյ, սկսու անձրեւել, նուրը, պզտիկ
անձրեւ մը, ինչպէս այս զիշեր. անձրեւատ օրեր բազդ
չունիմ:

Ուստի, սկսայ քալել փողոցներու մէջ. կը զիտէի
բոլոր տուները, ինքնիրենս բոկլով. Անսոնց մէջ ան-
քան անկողիններ և հաց կայ, և ես չեմ կրնար զտնել
փշանք մը և յարզանց մը, անցայ փողոցներէ, ուր
իին ըը կը կանչէին անցնող մարդերը:

Այդպիսի պարագաներուն, մարդ կրցածը կ'ընէ: Միւս կրներու պէս, սկսաց ժարդերը հրամիրել: Բայց բնաւ չէն պատասխաներ ինձի: Կ'ուզէի մեռած ըլլալ: Այս տեսեց մինչեւ կէս զիշեր:

Այլեւ չէի զիտեր ըրածու ի վերջոց, ինձի մօտեցաւ մարդ մը և ըստ: «Դուն ո՞ւր կը բնակիս: Մարդ շուտով խորամանկ կ'ըլլայ կարօսութեան մէջ: Պատաս, խանեցի, «Զեղ չէմ կրնար տունս տանիլ, քանի որ կը բնակիմ մօրս հետը: Բայց չկա՞ն առներ, ուր կարելի ըլլար երթալ:»

Պատասիւնց, «Յաճախ, կէս ֆրանք կը ծախսեմ սենեակի հոմար:» Յետոյ, քիչ մը մտածեց և աւելցաց: «Հետո եկուր, կը ճախչամ հանդարտ տեղ մը ուր մեզ բնաւ չեն ընդհատեր:»

Ջիս մնցուց կամուրջէ մը և յետոյ տարաւ. քաղցին ծայրը, պարտէզի մը մէջ զետակին մօտը: Այլեւ չէի կրնար հետեւիլ իրեն:

Ջիս նստեցաւ և սկսաւ խօսիլ մեր հոն գալուն պատճառներուն մասին: Եւ որովհետեւ գործը երկար կը տեւէր, յոգնութենէ ուժասպառ քնառայ:

Մեկնեցաւ առանց բան մը տալու ինձի: Սակայն, զայն բնաւ չնշմարեցի: Կ'անձրեւէր, ինչպէս որ ձեզ ըստ Այն օրէն ի վեր, ցաւեր ունիմ, զոր չկրցայ բուժել. մարգին վրայ պատկած էի:

Երկու սատիկաներ զիս արթեցնելով պահականց տարին, ուրկից բանաւ կը շանային հասկնայ թէ՝ ո՞վ կրնայի ըլլալ և ուրկից կուգայի: Զուզեցի զայն ըսկը վախնալով հետեւանքներէն:

Ութ օր վերջ զայն հասկցան, և զիս տղատ ձգեցին, անմեղութեան վճիռէ մը վերջը:

Պէտք էր սկսիլ հաց գանել: Զանացի գործ մը ունենալ, բայց չկրցայ, բանային պատճառաւ ուրկից կուգոյի:

Յայնժամ յիշեցի ծերուկ գատաւոր մը, որ ինձի աչք նետած էր, երբ կը գատէր զիս: Եւ զացի գտնել զինքը: Բնաւ չէի խաբուած. ինձի հարփար ուռ տոււաւ, երբ կը զատուէր իրմէ, ինձի ըսելով. «Այսչափ պիտի առնես ամեն անգամ, բայց, աւելի յաճախ մի զար քան շարաթը երկու անգամ:»

Ասոր իմաստը լաւ հասկցայ, նկատի առնելով իր տարփը: Յայնժամ մտածում մունեցայ և ինքնիրենս ըսի. «Երիտասարդներու հետը մարդ կը զուարձանայ մինչդեռ ծերերու հետը ինզիրը կը տարբերի...»

Գիտէ՞ք, Պարոն, ի՞նչ ըրի: Պօհէմի պէս հագուեցայ. շուկայէն եկողներուն հտեւէն կը վազէի փողոցներու մէջ և կը վնատոէի անունս տուողներ: զանոնք կը ճանչնայի առաջին ակնարկով և ինքնիրենս կ'ըսէի. «Աւ հաւասիկ մէկը, որ կրնայ բոնուիլ ուռկանի մէջ...»

Երբ որ մէկը մօտենար, քայլս կը գանդաղացնէի, որպէսզի ժամանակ ունենայ, ինքինքը բացատրելու:

Ան, կամացուկ մը կ'արասասանէր քանի մը հօմբելիմաներ, որմէ յետոյ, ինէ կը ինզրէր իր տունը երթալ: Աղաչել կուտայի, կը հասկնաք, յետոյ, տեղի կուտայի: Այսպէսով, ամէն առառ երեկոյ երկու երեք հատ ունէի և ազատ էի ամբողջ կէսօրէ վերջը: Ասիկա կեանքիս լաւ ժամանակը եղաւ:

Սակայն մարդ չկրնար երկայն ատեն հանգիստ մընալ: Դժբաղդութիւնս ուղեց որ, ճանչնայի հանրածանօթ խոշոր հարուստ մը, նախկին նախագահ մը, որ 75 տարեկան էր:

Դիշեր մը զիս տարաւ շրջանակները ճաշարան մը: Եւ յետոյ, կը հասկնաք, չփիտցաւ չափաւորել ինքինքը: Աղանդերի միջոցին մեռաւ:

Երեք ամիս բանասարկութեան դատապարտուեցայ, նկատելով որ հսկողութեան ներքեւ չէի:

Առկից վերջն է որ Բարիդ եկայ.

Ահ, Պարոն, հսու ապրիլ գֆռուար է: Ամեն օր կարելի չէ ճաշել, շտա կայ. վերջապէս, աւելի գէշ, ամեն ոք ունի իր ցաւը: Այնպէս չէ:

Լուս: Սիրոս լեցաւած կը քալէի իր քովէն: Յան-
կարծ, ակսաւ մաերմօրէն խօսիլ հետո.

- Ուրեմն, սենեակս չե՞ս դար, սիրելիս
 - Ո՞չ, արդէն քեզի զայն ըսած եմ:
 - Ե՛ շատ լաւ՝ ցաւսութիւն, նորէն ալ չնորհակալ եմ, առանց ոխակալութեան. բայց, քեզ կ'ապահովնեմ որ անիրաւ եօ:

Եւ մեկնեցաւ, սուզուելով նուրբ անձրեւին մէջ, քո-
ղի մը նման: Տեսայ ելեքտրական լամպայի մը ներքե-
ւին իր անցնիլը և յետոյ անհետանալը ստուերին մէջ:
Հէզ աղօդիկ:

4682



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍ ՂԱԶԻԿԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԵՒԻՊՏՈՍ

1. ՄԱՏԱՆԱՅԻՆ ԶԱԼԱԿԸ ԳԵՐԱՄԱՆ Աւանդավեպ
2. ՊՕՍՔՕՄՊ ՀՈՎՀԻՑԻՆ ԳՈՂՑՆԵՔԸ
Գաղտնի ոստիկանական վեպ
3. ԿԱՐՄԻՐ ԳԼՈՒԽԵՈՎ ՄԱՐԴՈՅ ԽՄԲԱԿԸ
Գաղտնի ոստիկանական վեպ
4. ՊՐԻՒՍ ԲԱՐԹԻՆԿԹԸՆ ՍՈՒԶԱՆԱԻԻՆ ԳԱԼՏՆԵՔԸ
Գաղտնի ոստիկանական վեպ
5. ՍԵՒԱԶԳԵՍՏ ԼՐՏԵՍԸ Գաղտնի ոստիկանական վեպ
6. ՃԵՊԸՆԹԱՅ ՆՈՐԱԾԻՆԸ (ԵՐ. ՕՏԵԱՆ)
7. ՏԻԿ. ՀԻՒՅՈՒՆԻ ՎԱՐԴԵՆԻՆ
8. ՊԵԼՖԵԿՈՐ Պատկ. մեծ վեպ բայց. ոստիկ. կեանք

ՀԱՅՈՒՍՏՈՒՐ տեսարաններ, բառը փոստալի ձրայ

ՀԱՅՈՒՍՏՈՒՐ Գլուխաւոր բարտեր, փոքր և ընդարձակ

ՀԱՅՈՒՍՏՈՒՐ Նամակադրաշմենի, եին և օոր

ՀԱՅՈՒՍՏՈՒՐ Պետական նախկին և առջի գարիչներու
Մեծ ու փոքր պատկերներ

ԳՐԱԴԵՏՆԵՐՈՒ, ԳՐԱԴԻՑՈՒՀԵՆԵՐՈՒ, ԶՈՒՎԱՐՆԵՐՈՒ
ԿՐՈՆԱԿՈՆՆԵՐՈՒ, ՀԵՐՈՍՆԵՐՈՒ Եւլճ. Քառք Բոստաներ:

